ԲՕՅԻԿ, Ա. բ., պօյ, հասակ:

Գ.

ԳԱԼԵՆԻ, մ. հ., «լարն ի վերայ գալենի», գայլի աղիքով շինուած (?):

ԳԱՆ, դասական հայերէնի բառ, ծեծ: Գան ու ծեծ, գան ու խոց, ու ձըգէ զխնձորն ի գանէ, կը ձգէ որ խնձորը ծեծեն, կոխկրտեն:

Նաեւ գան, քան, հանք (պ. քեան):

ԳԱՏԵՀ, տես եւ ԽԱՏԵՀ, ԽԱՏԵՀ, Ա. բ., ա. քատեհ, գաւաթ:

ԳԱՒ, մ. հ., պ. կեավ, տեսակ մը գինիի մեծ գաւաթ՝ ոսկի կամ արծաթ, գաւ մի գինու:

ԳԷՄ մ. հ., շեշտով վանկ մը, արեւելահայոց խօին պէս:

ԳԷԾ, Ա. բ., տգեղ, գիշու, տգեղի:

ԳԻՆԱՆԱՄ, մ. հ., գինովնամ:

ԳԻՐԿՈՒԾՈՑ, մ. հ., գիրկընդխառնում:

ԳԼԽԱԿ, մ. հ., 1. Գլխակ. 2. Գլուխ:

ԳԼԽԱՎԱՐԵԼ, մ. հ., մէկը գլխիվայր գետին զարնել:

ԳՆՏԻՐ, մ. հ., Գնտիր ջէիր սիրեր զիս, է՞ր ջասիը՝ թա՛րկ զէն, զիս սիրէ». եթէ:

ԳՇԿՈՒՐ, Ա. բ. , քակոր, կովու թրիք:

ԳՈՒՊԱՅ, մ. հ., ա. քուպպէ, գմբէթ, կամար. մատուռ. տապանակ:

ԳՈՒՄԱԾ, ա. կերպաս:

ԳՐՕՂ, մ. հ., ժողովուրդը աէն տեղ այս բառը կ՚արտասանէ grogh, (հոգէառ հրեշտակ՝ ըստ Հայոց հին հեթանոսական հաւատքին):

ԳՕՁԱԼ, տես եւ ԿՕՁ ԱԼ, ԿԻՒՁԷԼ, մ. հ., կիւզէլ, գեղեցիկ, գեղեցկուհի, գեղեցկութիւն:

ԳՕԹԵՆԱԼ, մ. հ., բորոտիլի:

ԳՕՅՏԻԼ, Ա. բ., գանգատիլ:

Դ.

ԴԱԴՐԵՑՆԵԼ, մ. հ., հանգչեցնել (կրակը) դադրեցնել, մարել:

ԴԵԼԱԼ, մ. հ., ա. տալալ, պչանք. Ձեռկունքն է դալալ տւել ու նըստել առջեւ գընողին:

ԴԱՆ, Ա. բ., դէն, դի, ի դան դիր, մէկդի դրի:

ԴԱՆԻՇՄԱՆ, պ. տանիշմէնտ, գիտուն, գիտնական:

ԴԱՆԿԻԿ, Ա. բ., փոքր դանակ:

ԴԱՍՏՈՒՐ, ա. տէսթուր, արտօնութիւն, հրաման:

ԴԱՏԵԼ, ԴԱՏԻԼ, մ. հ. , չարաչար աշխատիլ: Ա. բ. դատիլ, աշխատիլ, (տես Ճանիկեան):